

# ՉԻՆԱՍՏԱՆ

中国

**Չինաստանը** աշխարհի հնագույն քաղաքակրթություն ունեցող երկրներից մեկն է, որն ունի մոտ 5000 տարվա պատմություն: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքը կազմում է 9.600.000կմ² և համարվում է 3-րդը աշխարհում: Բնակչության քանակով 1-ն է՝ 1 .600.000.000 մարդ: Մայրաքաղաքը Պեկինն է:



**Չինաստանի դրոշը** հաստատվել է 1949թ-ի հոկտեմբերի 1-ին: Հիմնական գույնը կարմիր է՝ կոմունիզմի գույնը, ձախ վերևի անկյունում հնգանկյուն 1 մեծ և 4 փոքր ոսկեգույն աստղ:



**熊猫 xióngmāo – պանդա**, չինարենից թարգմանած արջ-կատու
Համարվում է Չինաստանի խորհրդանիշը, բնակվում է կենտրոնական Չինաստանի լեռնային շրջաններում, գրանցված է Կարմիր գրքում: Ուտում է հիմնականում բամբուկ:





**Չինական Մեծ Պատ**. Երկարությունը 21.000կմ է, բարձրությունը մոտ 10 մ.: Կառուցումը սկսվել է մ.թ.ա.III դարում, նպատակն էր պաշտպանել տոհմական տարածքները քոչվոր ցեղերից, թշնամիներից: Կառուցմանը մասնակցել է մոտ 2 միլիոն մարդ: 2007թ-ից համարվում է Աշխարհի 7–րդ հրաշալիքներից մեկը: Միակ կառույցն է, որ երևում է տիեզերքից:









Մինչ օրս պահպանվել են բազմաթիվ ազգային յուրօրինակ կառույցներ՝ դեպի վեր խոյացող տանիքներով, որոնք տիպիկ են չինական ճարտարապետությանը և համարվում են միջազգային ճարտարապետական գանձեր:















Չինաստանը խորհրդանշող մի քանի նմուշներ…
Ի դեպ Չինաստանում է հայտնաբերվել թուղթը, գունավոր տպագրությունը, անձրևանոցը, մետաքսը և ճենապակին, կողմնացույցը, հայելին և էլի շատ-շատ բաներ:















**Ուշու** կամ քունֆու- չինական մարտարվեստ











**Չինական գիր - Իռոգլիֆ /** han zi/ կա մոտ 5000 իռոգլիֆ (մեկ նշում – որպեսզի սովորական չինացին կարողանա կարդա թերթ պետք է իմանա մոտ 3000իռոգլիֆ ☺️)
















